ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 15-Ն

29 մարտի 2018 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26 -Ի N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2018 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 3-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Համայնքի բյուջեի եկամտային մասի <<Ընդամենը եկամուտներ>> տողի <<557689,0>> թիվը փոխարինել <<558689,0>> թվով, այդ թվում

1) Համայնքի բյուջեի վարչական մասի եկամտային մասի 7131 հոդվածի(գույքահարկ փոխադրամիջոցների համար) տողի <<56795,4>> թիվը փոխարինել <<57795,4>> թվով:

2. Համայնքի բյուջեի ծախսային մասի բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման <<Ընդամենը ծախսեր>> տողի ընդամենը սյունակի <<595460,8>> թիվը փոխարինել <<596460,8>> թվով այդ թվում՝

1) Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 01, դաս 01 (ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4214 (կապի ծառայություններ) հոդվածի <<1398,0>> թիվը փոխարինել <<1898,0>> թվով, 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի <<2000,0>> թիվը փոխարինել <<3000,0>> թվով:

2)Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 02, դաս 07 (հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում) և տնտեսագիտական դասակարգման, 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի <<4000,0>> թիվը փոխարինել <<0>> թվով, 5113 (շենքերի և շինությունների կապիտալ նորոգում) հոդվածի <<5000,0>> թիվը փոխարինել <<0>> թվով, 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<998,0>> թվով:

3) Գործառնական դասակարգման բաժին 06, խումբ 04, դաս 01 (փողոցների լուսավորում) և տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի <<21000,0>> թիվը փոխարինել <<30000,0>> թվով:

4) Գործառնական դասակարգման բաժին 06, խումբ 03, դաս 01 (ջրամատակարարում) և տնտեսագիտական դասակարգման 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածի <<9749,2>> թիվը փոխարինել <<8251,2>> թվով:

3.Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4819 (նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) հոդվածից <<100,0>> հազար դրամ հատկացնել <<Հայաստանի Հանրապետության Պատերազմի, Զիված Ուժերի, Աշխատանքի և Իրավապահ մարմինների վետերանների միավորում>> հասարակական կազմակերպության Անիի մասնաճյուղին, <<100,0>> հազար դրամ՝ <<Հայաստանի Հանրապետության Երկրապահ կամավորականների միության մարզային խորհուրդ>> կազմակերպությանը, <<50,0>> հազար դրամ՝<<Լանջիկի միջնակարգ դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

4.Գործառնական դասակարգման բաժին 08, խումբ 02, դաս 07 (հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում) և տնտեսագիտական դասակարգման 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածից <<998,0>> հազար դրամ հատկացնել <<Հայ Կաթողիկէ Առաջնորդարանին>>՝ Լանջիկ գյուղի եկեղեցու վերանորոգման համար :

5. Գործառնական դասակարգման բաժին 06, խումբ 03, դաս 01 (ջրամատակարարում) տնտեսագիտական դասակարգման 4657(այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածից <<600,0>> հազար դրամ, որպես համայնքային ներդրում հատկացնել Ջրափի բնակավայրի ոռոգման ներքին ցանցի ր կոյուղագծի վերակառուցման համար:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Նաիրի Ալավերդյան

Արսեն Արսենյան

Սուրեն Գևորգյան

Կամսար Հովսեփյան

Մաղլեն Ղազարյան

Արմենակ Նաջարյան

Արմեն Նիկոյան

Գևորգ Շաբոյան

Արթուր Ռուումյան

Վահրամ Սահակյան

Ագուն Սաղաթելյան

Ձավեն Սարգսյան

Արսեն Վարոսյան

Գևորգ Ղզրոյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

ք. Մարալիկ
29 մարտի 2018 թվական